

Հարգելի հայրենակիցներ,

ջերմորեն շնորհավորում եմ Հայոց բանակի կազմավորման 32-ամյակի առթիվ: Հայաստանում և սփյուռքում ապրող յուրաքանչյուր հայ կարող է բազմաթիվ հերոսական դրվագներ պատմել հայ զինվորի ու հայոց բանակի հրամանատարի կատարած սիրանքների մասին:

Հայկական բանակը, մեր թիկունքն ու հենարանն է, որ տասնամյակներ շարունակ հսկել և պաշպանել են մեր հայրենիքի սահմանները: Մեր բանակը մեծ պատմություն ունի, որի էջերում հերոսական դրվագներ են մեխված, իսկ այդ հերոսական պատմությունները անմասն չեն կորուստներից: Սակայն վստահ եմ, որ դրանք ժամանակավոր են: Հայոց բանակի փառահեղ պատմությունը կերտվում է հենց սահմանին կանգնած զինվորի աչալրջությունով ու վարքով, հրամանատարի գրագետ վերաբերմունքով ու ռազմական տաղանդով: Մեր բանակը մեծ փորձությունների միջով է անցել, սակայն կանգուն է մնացել, ուրեմն մենք էլ իրավունք չունենք թուլանալու: Պետք է Հայոց բանակի թիկունքն ամուր պահենք՝ ավելի շենացնելով և բարեկարգելով մեր հայրենիքը: Շնորհավոր մեր պետականության գլխավոր երաշխավորի՝ հայոց բանակի և հայ զինվորականի տոնը: